

Պ.

ԿԵՍԱՐԱՑԻԻ ԱՌԱՋԻՆ ՊԱՏՐԻԱՐԲՈՒԹԻՒՆԸ  
ԵՒ  
ԵՊԻՍԿՈՊՈՍՈՒԹԵԱՆ ԱՍՏԻՃԱՆ ՍՏԱՆԱԼԸ

Կ. Պոլիս թէ՛ իր աշխարհագրական և թէ՛ իր քաղաքական դիրքին բերմամբ բացառիկ կարևորութիւն մը ունեցած է Հայոց համար, Օսմանեան տիրապետութեան ենթարկուելէն յետոյ, երբ հոն հաւաքուած են զանազան գաւառներէ Հայեր, որոնք ներքին գաւառներու հետ առևտրական և սեղանաւորական յարաբերութիւններ կը մշակէին:

Կ. Պոլիս, իբր մայրաքաղաք կայսրութեան, կը համարուէր սիրտը պետութեան: Թուրքիոյ Հայոց պետութեան հետ ունեցած յարաբերութեան միակ խողովակը Կ. Պոլսոյ պատրիարքութիւնն էր, որ հետըզհետէ աւելի որոշ կազմակերպութիւն մը և քաղաքական հաստատուն հիմնարկութիւն մը կը դառնար:

Կ. Պոլսոյ պատրիարքները ժամանակի ընթացքին հետզհետէ աւելի կ'ընդարձակէին իրենց իրաւասութիւնը և ձեռք կը բերէին աւելի մեծ հեղինակութիւն: Կ. Պոլսոյ Հայ գաղութը՝ իբր պատրիարքութեան անմիջական ենթակայ, կը ստանար իր